25. ԷՐԿՈՒ ԳԻԺ ԱԽՊԵՐՏԻՆՔ

Էրկու ախպեր են ըլնում, էրկուսն էլ գիժ են ըլնում։ Սրանք ամեն վախտ տանում էին տավարը հանգը արածացնելու։ Մի անգամ պուճուր ախպերը տանից հաց վե կալավ, որ տանի հանգը իրա ախպոր համար։ Ճամփին տեհավ՝ մի մարդ իրա հետևից հա՝ գալիս ա։ Էս կապովի գիժը հացերից մինը վեր գցեց.

— Ըհը՛, ա՛ռ էս հացը ու ռադ իլ գլխիցս։

Էլի տեհավ, որ դալիս ա հետևից, մի հաց էլ գցեց.

— Ա՛ռ էս էլ, օ՜հ, ինչ աչքածակ մարդ ա էլե, էսքան տվի, չկշտացա՜վ։

Էսպես, մինչև հանդը ինչքան հաց ուներ վե գցեց, չունքի էն մարդը, որ նրա աչքին երևում էր, հենց իրա շվաքն էր։ Էկավ իրա ախպոր մոտ անհաց։

Մեծ ախպերը ասեց.— Տո՛, այ գիժ, քու հացը ո՞ւր ա։

Նա պատասխան տվեց.— Տեսնո՞ւմ ես էս մարդը, բոլոր հացը կերել ա, էլի դեռ փորը չի կշտացել ու հետևիցս գալիս ա։ Ինչ աչքածակ մարդ ա՛ էլե սա։

Տավարը էս էրկու ախպերտինքը քշեցին, որ տուն տանեն։ Ճամփին մի դեռ ռաստ էկավ ու էս գիժ ախպորտանց տավարը չէր անց կենում։

— Հա, չըլնի վախենում եք սապոկներնիդ թրջվի, էնդուր համար չեք ուզում ջուրը անցնի,— ասեցին էս գիժ ախպերտինքը ու նրանց պճեղները դանակով մին-մին հանեցին, արինշաղաղ ոտներով գցեցին գետն ու իրանք էկան տուն։

— Տավարը տուն հո չի էկել,— հարցրին էս գիժ ախպերտինքը,— նրանք մեզանից առաջ են ճամփա ընկել։

Տեհան, որ ոչ տավար կա, ոչ էլ բան, չունքի բոլորն էլ ջրում խեղդվել էին։